«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«31» օգոստոսի 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 6 անդամները**

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Ղուլունց Վիգեն
6. Աղավելյան Տաթևիկ
7. Մկրտչյան Սերժիկ
8. Ասրյան Հենրիկ
9. Ավանեսյան Կարո

**Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը, հաշվապահ Մայրանուշ Թոխունցը:**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. Դպրոցի կառավարման խորհրդի նիստերի հրավիրման ժամանակացույցի հարցը:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
3. Եռամսյակային հաշվետվության մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Թոխունց)
4. Պակաս խտությամբ չորս երրորդ դասարան ունենալու մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

*Լսեցին 1.* Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Դպրոցի կառավարման խորհրդի նիստերի հրավիրման ժամանակացույցի մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը նշեց, որ արդյունավետ քննարկումներին և հարցերին ճիշտ լուծումներ տալու համար նիստերն անհրաժեշտ է կազմակերպել ըստ սահմանված կարգի՝ առնվազն երեք ամիսը մեկ, ինչպես նաև առաջարկեց հաստատել դպրոցի կառավարման խորհրդի աշխատակարգը:

*Արտահայտվեցին՝* Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները նշեցին, որ առնվազն երեք ամիսը մեկ նիստերի անցկացումն ամրագրված է դպրոցի օրինակելի կանոնադրության 33-րդ կետի պահանջներին համապատասխան:

*Որոշեցին՝* Հաստատել դպրոցի կառավարման խորհրդի աշխատակարգը:

*Լսեցին 3.* Եռամսյակային հաշվետվության մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Թոխունց)
Հաշվապահը ներկայացրեց դպրոցի վերջին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունը: Մնացորդը առ 01.01.2022թ. կազմել է 15991,6 մլն դրամ: Ֆինանսավորվել է 56467,5 մլն դրամ: Ծախսը կազմել է 4111 – աշխատավարձ – 51131,8 մլն դրամ, 4211- ծառայություններ և ապրանքների ձեռքբերում-15193,3 մլն դրամ: Մնացորդը առ 01.07.2022թ. կազմել է 6134,0 մլն

դրամ:

*Արտահայտվեցին՝* Մ. Հովսեփյանը

Մենուա Հովսեփյանը հավանություն տվեց ներկայացված հաշվետվությանը, նշեց, որ իր կարծիքով դպրոցը ֆինանսները կառավարել է արդյունավետ:

*Որոշեցին՝* Հաստատել դպրոցի եռամսյակային հաշվետվությունը:

*Լսեցին 4.* Պակաս խտությամբ չորս երրորդ դասարան ունենալու մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց նախորդ տարիների փորձի վրա և առաջարկեց թույլատրել 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ևս ունենալ ցածր խտությամբ ընդհանուր թվով 3-րդ դասարաններ:

Դ. Կոստանդյանը կառավարման խորհրդի անդամներին ներկայացրեց դպրոցի լրացուցիչ հնարավորությունները, խնայողությունները, նշելով, որ դպրոցն այժմ ունի արևային կայաններ, ինչը թույլ է տալիս լրացուցիչ եկամտի աղբյուր ձեռք բերել և հոգալ դպրոցի ծախսերը: Նաև նշեց, որ դպրոցի հարակից հատվածում տեղադրվել են անձրևաջրերի հավաքման համար նախատեսված բաքեր, որոնցում կուտակված ջուրը նույնպես օգտագործվում է դպրոցի կարիքների համար:

Դ. Կոստանդյանը նաև նշեց, որ այդ հարցով դպրոցի տնօրինությանն են դիմել երրորդ դասարանների ծնողները, ովքեր նշել են, որ նպատակահարմար են համարում շարունակել ուսուցման պրոցեսը դասարանների նախորդ տարիների խտությամբ ու առաջարկել, դասարանների քանակը թողնել անփոփոխ:

*Արտահայտվեցին՝* Մ.Հովսեփյանը, Վ.Ղուլունցը, Մ.Թոխունցը

Մայրանուշ Փոխունցը ներկայացրեց դպրոցի ֆինանսական հնարավորությունները, տնօրենի կողմից կատարված աշխատանքները, համագործակցությունները, որոնք միտված են լրացուցիչ միջոցների ձեռքբերման ու խնայողությունների ավելացմանը:

Մենուա Հովսեփյանն ու Վիգեն Ղուլունցն առաջարկեցին հաշվի առնել նախորդ տարիների փորձի արդյունքներն ու ծնողների կողմից արված առաջարկները:

*Որոշեցին՝* Հաշվի առնելով տնօրեն Դավիթ Կոստանդյանի հիմնավորումները, դպրոցի ֆինանսկան հնարավորություններն ու ծնողների առաջարկը, թույլ տալ օրենքի շրջանակներում 2022-2023 ուսումնական տարում նույնպես ունենալ ցածր խտությամբ ընդհանուր 4 երրորդ դասարան:

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի**
**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**
**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**

«15» սեպտեմբերի 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 6 անդամները**

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Ղուլունց Վիգեն
6. Աղավելյան Տաթևիկ
7. Մկրտչյան Սերժիկ
8. Ասրյան Հենրիկ
9. Ավանեսյան Կարո

**Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. Ներքին գնահատման հաշվետվության հաստատման մասին:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
3. 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիայի քննարկման և հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

***Լսեցին 1.*** Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Կ. Ավանեսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Ներքին գնահատման հաշվետվության հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դավիթ Կոստանդյան)
Զեկուցողը մանրամասն ներկայացրեց դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունը, անդրադարձավ ձեռքբերումներին, բացթողումներին:

***Արտահայտվեցին՝*** Մերի Դանիելյանը, Մենուա Հովսեփյանը, Մարգարիտա Պետրրոսյանը
Արտահայտվողները նշեցին, որ մանրամասնորեն գրի է առնվել ու ներկայացվել դպրոցի ներքին գնահատումը, շեշտվեց, որ հանձնաժողովի կողմից կատարվել է ծավալուն աշխատանք:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն ներքին գնահատման հաշվետվությունը:

***Լսեցին 3.*** 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիայի քննարկման և հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիան, նշեց, որ այն կազմվելու համար հիմք են հանդիսացել նախնական և հիմնական դասաբաշխումները, ինչպես նաև սահմանված ձևանմուշին համապատասխան մյուս պահանջները:

***Արտահայտվեցին՝*** Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները նշեցին, որ ուսումնասիրել են դպրոցի տարիֆիկացիան և այն համապատասխանում է բոլոր պահանջներին:

***Որոշեցին՝*** Հաստատել Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2022-

2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիան։

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«26» դեկտեմբերի 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 8 անդամները**

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ավանեսյան Կարո
7. Ղուլունց Վիգեն
8. Աղավելյան Տաթևիկ

**Նիստին ներկա չէր կառավարման խորհրդի 1 անդամ**

1. Ասրյան Հենրիկ

**Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

2. 2022 թվականի ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին հավելավճար տրամադրելու մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

***Լսեցին 1.*** Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** 2022 թվականի ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին հավելավճար տրամադրելու մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Զեկուցողը ներկայացրեց դպրոցի աշխատողների կողմից կատարված աշխատանքները, արձանագրեց հաջողություններն ու ձեռքբերումները:

Հաշվի առնելով աշխատողների համագործակցված արդյունավետ աշխատանքը, ուսուցիչների պատրաստակամությունը՝ ուղղված դպրոցում կրթության որակի բարձրացմանը, աշխատողների հետևողական և սրտացավ վերաբերմունքը շենքային պայմանների բարելավմանը՝ Մենուա Հովսեփյանն առաջարկեց հավելավճար տրամադրել աշխատողներին՝ մեկ ամսվա աշխատավարձի 100%-ի չափով:

***Արտահայտվեցին՝*** Դ. Կոստանդյանը, Վ. Ղուլունցը

Վիգեն Ղուլունցը նշեց, որ համակարծիք է զեկուցողի հնչեցրած կարծիքի հետ: Դավիթ Կոստանդյանը նշեց, որ իսկապես աշխատակիցներն իրականացնում են համագործակցված արդյունավետ աշխատանք, պատրաստակամ են, բոլոր աշխատում են ի շահ դպրոցի և դպրոցում կրթության որակի բարձրացման ուղղությամբ:

***Որոշեցին՝*** 2022 թվականի ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին տրամադրել հավելավճար՝ աշխատավարձի մեկ ամսվա աշխատավարձի 100%-ի չափով:

Խորհրդի նախագահ՝ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

«05» հունվարի 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 8 անդամները**

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ավանեսյան Կարո
7. Ղուլունց Վիգեն
8. Աղավելյան Տաթևիկ

**Նիստին ներկա չէր կառավարման խորհրդի 1 անդամ**

1. Ասրյան Հենրիկ

**Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը, հաշվապահ Մայրանուշ Թոխունցը:**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիայի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
3. 2023 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման մասին:
(զեկուցող՝ Մ. Թոխունցը)

***Լսեցին 1.*** Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիայի քննարկման և հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիան, նշեց, որ այն կազմվելու համար հիմք են հանդիսացել նախնական և հիմնական դասաբաշխումները, ինչպես նաև սահմանված ձևանմուշին համապատասխան մյուս պահանջները:

***Արտահայտվեցին՝*** Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները նշեցին, որ ուսումնասիրել են դպրոցի տարիֆիկացիան և այն համապատասխանում է բոլոր պահանջներին:

***Որոշեցին՝*** Հաստատել Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիան:

***Լսեցին 3.*** 2023 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Թոխունցը)
Զեկուցող Մայրանուշ Թոխունցը ներկայացրեց 2023 թվականի բյուջեի նախնական հաշվարկները:
Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 900288000020 գանձապետական հաշվի մնացորդը առ 01.01.2022 թվականին կազմել է

15991600 դրամ:
2022 թվականին հանրակրթական ծրագրերով ֆինանսավորում ստացել ենք 138281000 դրամ, որից ծախսվել է ընդամենը 135891300 դրամ:
Ծախսը ըստ տնտեսագիտական դասակարգման տարրերի՝
1.1 Աշխատավարձ 115017,700 դրամ
1.2 Շարունակական ծախսերը 17651000 դրամ
1. Հիմնական միջոցներ 608500 դամ
2. Կապիտալ վերանորոգում 2614100 դրամ
Ընդամենը՝ 135891300 դրամ
2022 թվականի բյուջետային ծախսերը հանելուց հետո տարեվերջյան մնացորդը առ 01.01.2023 թվականի կազմել է 18381300 դրամ: 2022 թվականի դեկտեմբերին Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի բոլոր աշխատողները ստացել են մեկ աշխատավարձի չափով պարգևատրություն:

***Արտահայտվեցին՝*** Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները նշեցին, որ իրենց կարծիքով դպրոցը ֆինանսները կառավարել է արդյունավետ:

***Որոշեցին՝*** Հաստատել բյուջեի նախագծի նախնական տարբերակը:

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի**
**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**
**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5**

«26» ապրիլի 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 8 անդամները**

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ավանեսյան Կարո
7. Ղուլունց Վիգեն
8. Աղավելյան Տաթևիկ

**Նիստին ներկա չէր կառավարման խորհրդի 1 անդամ**

1. Ասրյան Հենրիկ

**Նիստին մասնակցում էր դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նպատակային դրամաշնորհային ձևով ֆինանսական աջակցության տրամադրման և դպրոցի 2023 թվականի ֆինանսական ծախսերի նախահաշվում փոփոխություն կատարելու մասին:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

***Լսեցին 1.*** Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի նպատակային դրամաշնորհային ձևով ֆինանսական աջակցության տրամադրման և դպրոցի 2023 թվականի ֆինանսական ծախսերի նախահաշվում փոփոխություն կատարելու մասին հարցը:
(զեկուցող՝ Դ.Կոստանդյան)
Դավիթ Կոստանդյանը հաղորդեց, որ դպրոցի, որպես մենթոր, հանրակրթական պետական չափորոշչի ներդրման նպատակով տրամադրվել է դրամաշնորհ՝ իրականացնելու ուսումնական հաստատությունների ուսուցիչների, տնօրենների, տնօրենների տեղակալների վերապատրաստման դասընթացներ: Նշեց, որ ԿԶՆԱԿ-ը և դպրոցը կնքել են առանց մրցույթի տրամադրվող նպատակային դրամաշնորհի ձևով ֆինանսական աջակցության և գույքի օգտագործման մասին պայմանագիր: Հավելեց, որ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 763200 (յոթ հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր) դրամ և այն անհրաժեշտ է ընգրկել 2023 թվականի ֆինանսական տարվա ծախսերի նախահաշվի մեջ՝ վերապատրաստողներին աշխատավարձ վճարելու համար:

***Արտահայտվեցին՝*** Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները ողջունեցին դպրոցը որպես մենթոր դպրոց ընտրվելու հանգամանքը:

***Որոշեցին՝*** 1. Հավանություն տալ «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2023 թվականի ֆինանսական տարվա ծախսերի

նախահաշվում N4639 «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածում փոփոխություն կատարելու մասին հարցին:
2. Սույն որոշումը ներկայացնել լիազոր մարմնի հաստատմանը:

Խորհրդի նախագահ՝ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

«29» մայիսի 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 8 անդամները**

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ավանեսյան Կարո
7. Ղուլունց Վիգեն
8. Աղավելյան Տաթևիկ

**Նիստին ներկա չէր կառավարման խորհրդի 1 անդամ**

1. Ասրյան Հենրիկ

**Նիստին մասնակցում էր դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

2. «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսումնական գծով փոխտնօրենին և հաշվապահին պարգևատրելու մասին:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

***Լսեցին 1.*** Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսումնական գծով փոխտնօրենին և հաշվապահին պարգևատրելու մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանն ու հաշվապահ Մայրանուշ Թոխունցը 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական, ֆինանսական, տնտեսական աշխատանքները լավագույն ձևով են կազմակերպել, աջակցել են դպրոցի հետ կապված բոլոր խնդիրներին լուծում տալու հարցում, բարեխիղճ և պատրաստակամ կատարել են ոչ միայն իրենց պաշտոնային պարտականությունները, այլ նաև աջակցել են դպրոցի մյուս աշխատակիցներին: Զեկուցողն առաջարկեց Սերգեյ Ավանեսյանին և Մայրանուշ Թոխունցին տրամադրել հավելավճար՝ աշխատավարձի 100% -ի չափով:

***Արտահայտվեցին՝*** Մարգարիտա Պետրոսյանը, Մերի Դանիելյանը, Մենուա Հովսեփյանը

Արտահայտվողները նշեցին, որ նկատելի են համարում դպրոցի գործունեության լավարկումը, որն իսկապես արժանի է դրվատանքի և խրախուսման, իսկ նշված աշխատանքների գործունեությունը գնահատեցին գերազանց:

***Որոշեցին՝*** Սերգեյ Ավանեսյանին և Մայրանուշ Թոխունցին տրամադրել հավելավճար՝ աշխատավարձի 100% -ի չափով:

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Կառավարման խորհրդի արձանագրությունների ամփոփման**

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում *Կառավարման խորհուրդը* գումարել է *6 հերթական նիստ*, որոնց համար կազմվել է *6 արձանագրություն։*

*Կառավարման խորհուրդը* նիստերի տվյալները՝ ստորև.

| № | ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ | ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ | ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ |
|---|---|---|---|
| 1 | 1 | 31.08.2022թ. | 4 |
| 2 | 2 | 15.09.2022թ. | 3 |
| 3 | 3 | 26.12.2022թ. | 2 |
| 4 | 4 | 05.01.2023թ. | 3 |
| 5 | 5 | 26.04.2023թ. | 2 |
| 6 | 6 | 29.05.2023թ. | 2 |

*Կառավարման խորհուրդի* սույն արձանագրությունների մատյանը կազմված է *12* էջից։

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«29» մայիսի 2023թ.